

## ՄՈՒԾ ԵՎ ՄՇԵՑԻՆԵՐ

«Նեմրութասարը հազար ակն ունի,  
Դազարն էլ Մշու դաշտ ի վար կերթան...»  
(Ժողովրդական)

Արևմբյան Հայաստան այցելողը, ուխտ ունեցողը հագրկապես, միշտ էլ փորձում է գոնե մոդավոր գեղեկություններ քաղել: Նման գեղեկագովության աղբյուր կարող են լինել այդ վայրերից տարագրված մարդկանց կամ նրանց ժառանգների պապմությունները, ճամփորդական նոթագրություններն ու գեղարվեստական գրվածքները, զանազան պատումները, և, անշուշտ, զուտ պարմագիրական ուսումնասիրությունները: Այդ «ուղեկիցների» շնորհիվ է, որ Արևմբյան Հայաստան մեկնող ամեն ուխտավոր նախապես որոշակի պարկերացում ունի իր մեկնած երեմնի հայաշաբ վայրերի, բնակչության նիստ ու կացի, ավանդույթների ու մշակույթի մասին:

Ինձ համար այդպիսի «ուղեկից» էին Լեռն՝ Անիում, Եղիշե Չարենցը՝ Կարսում, Խրիմյան Հայրիկը՝ Վանում, Գարեգին Սրբանձայանը՝ Մուշում:

Սրբանձայանն ինձ «ուղեկցեց» մինչև Նեմրութ լեռը. ես «նրա հետ էի» Վանա ծովակին հրաժեշտ քալուց սկսած, երբ ծովափնյա, ապա և սարերի սպորտպներին ոլորվող ճանապարհին նախապարագագութել էր պետք՝ Մուշի հետ «հանդիպման»:

Մի գեղեկություն, մի զմայլանք, մի հրաշք պարկերացում էր այն, ինչ պիտի գեսնեի քիչ անց՝ «ուղեկից» ունենալով Սրբանձայանին.

«Մշո այն գեղեցիկ հորիզոնը աչք ձգողին սիրով ինքնին կթրթոա, արյունը կ'եռա և հոգին կը բարձրանա...»

...Գրգուտա թիկնած ի վեր կը բարձրանա Նեմրութ լեռը, որու գուլիս նման է բոլորակ սեղանի մը. մեջ գեղը հրաբխի մարմրուքը և անոր շուրջ պասկած շարված աղբյուրներ բարեհամ և ծաղկունք անուշահոփ: Կարծես այս աղբյուրներ իբրև զովացուցիչ բաժակ դրված են այս բնության սքանչելի սեղանին շուրջ...»:

Այս քնարական նկարագրությանն անվետյակը ինչպես ու ինչ աչքով կնայի Նեմրութին՝ որպես սովորական մի լեռան, որի «զիսու սկավառակին մեջ» գոյացած լճակին է մի սովորական անվանում կոչա՝ խառնարան: Իսկ մեր ասած խառնարանը Սրբանձայանն անվանում է հրաբխի մարմրուք, որը լիճն է առաջացել՝ որպես հեփևանք աղբյուրների ջրերի, որոնք «ճողվել են մեկ գեղ և ավազան կազմել»: Ահա այսպեսից էլ իշնելով՝ այդ աղբյուրները Մեղրագետի ակունքն են դառնում:

Նեմրութն իր ուսերին մեր անցյալի փառքն է պահում, փառքն այն հաղթանակի, որ այսպես Հայկը նեփահարել է Բելին. «...Նեմրութ լեռը յուր ճակարեն կախած ունի Բելա դիակը, «Ի վեսի կանանց և որդոց» և ի նշան հաղթանակի մեր Հայկին»:

Նեմրութին հրաժեշտ քալով՝ «Ճաշեշտ եմ քալիս» նաև Գարեգին Սրբանձայանին, և երբ իշնում ենք Մշո դաշտ, այլևս իմ «ուղեկիցը» Արուայակ Սահակյանն է՝ արմադիրով մշեցի, Մշո աշխարհին քաջածանոթ՝ իր բանահյուսական, բանագիրական ուսումնասիրությունների շնորհիվ և Երևանում մեր բոլոր հանդիպումներին Մուշի ու մշեցիների մասին ինձ պարմած բազում-բազում պարմություններով:

Ահա, ուրեմն Նեմրութին հրաժեշտ դպեցինք և, ուխտավորներից ամեն մեկը յուրովի, իսկ ես «Արուայակի հետ», մրանք Մշո դաշտ:

Վարորդը լավ գիտեր, թե մեր ճանապարհորդության որ հավածում իր ճայնարկիչից ինչ երգ հնչեցներ. Վանում Դովիհաննես Շիրազի բանաստեղծությամբ երգն էր. «Մնաս բարով, իմ հայր Սիփան, և դու իմ մայր Վանա ծովակ», Կարինում Զիվանու «Կարինցու երգն» էր... Եվ ամենուր նույնը՝ գեղանքին բնորոշ երգ: Ոմանք ճայնակցում են, ոմանք իրենց գիտելիքն են ցուցադրում, թե ինչու բնաշխարհի անունը Մուշ է, շաբերն էլ նույնիսկ պարկերացնում են

լճակում լողացող Ասրբածուիուն, ով իրենով խենթացած ասպեքտներին անփեսանելի մնալու համար մշուշով է պարել դաշիր:

Մշուշով ինձ առաջին հերթին հիշեցնում է տիկին Արուայակին: Մտքումս նրա խորուգրույցն է՝ իր ապուպապով երկրի մասին:

Մուշ մինելուն պես վարորդը «Մշուշով աղջիկ» նորօրյա երգի ձայնագրությունը հրամցրեց, և ծորաց երգը, որ Մշուշով աղջիկա ու փղայի սիրերգային երկխոսությունն է.

– Եղ ինչ խորով պարկեր ունիս,  
Հայ ոսկեծամ Անահիտ իս,  
Արար աշխարհին լուս կիրաս  
Տասնիինգ օրվա լուսին իս:

Մի հեռանա դու իմ մովեն՝  
Նարբեցել եմ քո համ ու հովեն,  
Մշուշով, դու իմ սերն ես,  
Քըզի հավնել ա իմ աղեն:

– Մեռնիմ դրոշիդ պարվական,  
Որ կշողա հար մշտական,  
Մշուշով, խելքիդ մեռնիմ,  
Դու դարձար իմ սիրուն արժան:

Վարորդը հաղորդ չէր իմ մպորումներին և զգիրեր, անշուշր, որ այդ երգը չկար «Նարոյի» երգացանկում: Դա նրա իմանալու բանը չէր. նրա համար իմաս Մշուշունը կրող ամեն ինչ էլ այս աշխարհի, այս դաշիրի հետք է կապվում: Ես զգիրեմ ու չեմ էլ «քրքրում», թե ինչու մշեցու ակունքների գեր տիկին Արուայակն այդ երգը չի ընդգրկել իր անսամբլի երգացանկում (դա, անվարակույս, նրա ճաշակի իմադիրն է), բայց հաճույքով լսեցի երգը և սպասեցի այնքան, որ վերջանա այն և վարորդին առաջարկեցի ինձ հետք բերած ձայնագրությունը՝ արդեն միայն «Նարոյի» կապարումներից: Այսպես, սակայն, մեր ուխտավորներից Դրաչ պապը մեր բոլորի «հաշիվները» խառնեց. «Սա իմ երկիրն է, այսպես արդեն ես եմ իմ երգը երգելու»: Նրա պահանջին մենք ընդդիմացանք: Դրաչ պապի մասին իմ պապությունը «Մանրապապումներ» խորագրի փակ է, ուրեմն այսպես ես շարունակեմ Մշուշովում իմ մպորումները:

Այսպես, ուրեմն, Դրաչ պապի «համերգից» հետքո, ավարտենայի ձայնարկիչից արդեն հնչում էին «Նարոյի» երգերը: Կիսախուփ ազքերով երգերն էին լսում, և մտապարկերումս դասնամյակներ առաջվա իր ծաղկուն շրջանն ապրող «Նարոյ»-ն էր՝ Արուայակ Սահակյանի հիմնած-դեկավարած:

Դիմա գեւնես ինչ է անում Արուայակը՝ բանագետ-բանահավաքը, բանասիրական գիրությունների թեկնածուն... Այս պահին գուցե էին գյուղեցուղ ընկած ծերուկ ու տափիկի հետք զրուցու՞մ է, թեւ-թեւի երգում-պարու՞մ է, ծեսերից ծվեննե՞ր է քաղում, կուրակ-կուրակ հավաքում, որ հետք էլ «Նարոյ»-ի հետք «Նամբարձում», «Վարդավառ» հեռուստաֆի՞լմ նկարահանի: Շարունակեմ՝ հեռուստա-ռադիոհաղորդումներ, Կոմիդասի անվան երաժշգույն դասախոսություններ, գիրական աշխարհանքներ, գրքեր, «Նարոյ»: Ո՞ր մեկը թվարկեմ:

Մտովի Արուայակի հետք եմ: Մեկ առ մեկ հիշելու եմ նրա հետք ունեցած երևանյան մեր գրույցները: Իր ամեն արածի մասին որ հարցնես, կասի. «Բանահյուսության բացիլ եմ, ես հիվանդ եմ, ուզում եմ դեմս ելնողին էլ հիվանդացնել: Լավ էլ հիվանդանում եմ. և սերունդն ուր էլ պարպի, իր նախնու դուռն է զալու: Առաքելությունս էլ նախնյաց դուռը ցույց փալը դարձավ»:

Մի օր ասաց. «Ամենամեծ գովեսպս զիփե՞ս որն է եղել. 1988-ին ընկերուիհս հարցազրույց էր արել ինձ հետ, կոչումս դրել էր անուն ազգանվանս տակ: Դա գետել էր «Ավանգարդ» թերթի այն օրերի պարասխանապու քարտուղար Այդին Մորիկյանն ու ասել. «Երկար-բարակ կոչումներն ել շարել ես, Արուայակ Սահակյանը հերիք է: Չգրես էլ՝ կիմանան, որ Արուայակի հետ ես գրուցել»: Մրանից մեծ գովեսպ չեմ լսել: Մյուս դեպքը Սփյուռքում էր. խոսում եմ, մի փափսուք է անցնում սրահում. «Աչքը դիմու, մազը դիմու, ծամկալը դիմու, որչա՞վ հայուի է»: Այս գովեսպներին դեռ այփի արժանի լինեմ: Անուն՝ Արուայակ, կոչումս՝ հայուի: Մշեցին էլ՝ ծագումնաբանությունս: Վվելին էլ ի՞նչ երազեի»:

Երբ իր մասին է խոսում, միանգամից չես ըմբռնում՝ ասածը լու՞րջ է, ինքնահեղնանք է. գարօրինակ բնավորություն է, երբեմն իր արածի մասին էլ է հեգնում: Նեռուսպարեսային հարցազրույց է, ասում է. «Ինձ զգում եմ բոլոր դարերի զավակ»: Նեռուսպադիմողը փողոցում գետենում նրան, ասում է. «Դուք գեղեցիկ և հմայիչ կին եք», ինքը հակադարձում է՝ «Այդ Ձեր ազքերն են ինձ գեղեցիկ նայում»: Տարցնես՝ որդեղից էլ ճարու՞ն եք հանպարբաափից այդ պարասխանները, անմիջապես կշարունակի. «Պարսկահայերն են նման գովեսպներին այդպես պարասխանում. ինչ խելք ունեմ, ժողովրդից եմ հավաքել»:

...Մերենայի պարուհանից դուրս՝ Մշո դաշտի պափկերներ: Մփորումներս Առուայակի հետ ունեցած գրույցներն են՝ թե մեկ զայրույթ էր, դասն էդքան կարակ-սրամդություն: «1981-ին ոսդիոհաղորդաշար ունեի: Քրդական հաղորդումների բաժնից քրդուի ընկերուիհս ասում է. «Արուայակ ջան, թեզ շափ եմ սիրում, թեզ շափ եմ հավաքում, բայց մեր երգերն ինչո՞ւ են երգում»: Ասում եմ. «Օրինակ»: «Օրինակ՝ «Էլու յարին եմ, օ՛, օ՛, օ՛»: Ասում եմ. «Կամ էլ երգը հայերինն է, կամ ես քուրդ եմ: Ուրիշ քարքերակ չկա»: Նեղացավ: Եղբայրն էլ ասում է. «Արուայակ, դու մի երգի»: «Ինչո՞ւ»: «Քրդերն երգն էլ երգես, դառնում է հայերեն»: Ասում եմ՝ «Երգը թևավոր է, գեղից-գեղ է թռչում»: «Թողդ ազգից ազգ էլ թռչի, միայն բնավեր չմնա...»:

«...Մշո քաջերը քրդերն են, և բոլոր երգերն ու խաղերն ալ քրդերեն լեզվով են...»:

Գարեգին Սրբանձվյանը լսեր այս խոսակցությունը... Երանի՝ հրաշրով գար, լսեր, հայերեն ինքան երգ կա, որ իր Հայասպանից են թերել, ուր քուրդ ու թուրքն էր իրենց ամեն ինչին դեր կարծում: Թողդ բոլորը երգեն, միայն թե հայն իր երգահովում կարուր չմնա...»

Ճամփեն երկար, ու ես՝ Արուայակի հետ:

Արմագներով մշեցի, եւթյանք ազգային ակունքին կառչած հայի գետակ, անունը՝ Տիկին Արուայակ. կյանք նվիրեց՝ սերունդներին հայոց ակունքին մով պահելու համար: Գուցե հետք, շափ հետք իր արածը կոչվի սուրբ գործ: Թե փորձես գովել իր արածը, անմիջապես կիեզնի. «Բանահյուտությունը մեծ-մեծ բառեր չունի, ես էլ փախս եմ: Ես ոչինչ չեմ ծրագրել, ես իմ բաժին կյանքն եմ ապրել»:

Երևի ես էլ եմ մի քիչ հիվանդացել ազգախենք այդ կնոջից՝ ընդամենք խոսք-գրույցից եկած «վարակի բացիլ»: Ի՞նչ թերեց դա ինձ՝ պապենական երկրի պարմություն, ժողովրդի նիստ ու կա՞ց, մշակույթ ու ավանդույթ, թե՛ այսօր ապրող ամեն ինչ, որին մեկ բառով կարող ենք կոչել՝ Մենք:

Ու հիմա ուխտավորներս անցնում ենք Մշո դաշտով, և մի գետակ մերավոր եմ զգում ինձ. ես՝ արմագներով Կարինից, քիչ անց պիտի հասնեմ Կարին, Մշո դաշտում եմ, իսկ Արուայակն իր պապերի երկիրը դեռ ովք չի դրել: Ակամա մեղավոր եմ, և Արուայակի հետ ու Արուայակի ազգով եմ ուզում գետնել Մուշը: Մշեցի պապ ու դարբ, գաղյթի ճամփերին ծնված հայրը, բոլոր քարեցները, ում հետք գրուցել-ձայնագրել է Արուայակը, եղեռնից փրկված՝ հազար-հազար երգ-պար գաղյթի ճամփերով բերել-հասցրել են մեզ՝ անխառն, վճիռ, նախնական գետը-հմայքով: Նրանց պարմություններում, նրանց ամեն ասելիքի մեջ են երգի կարոփն է, են երգում թողած իրենց օջախը: Երգը՝ մեր պարմությունը, կենցաղն ու մեր բնավորությունը: Երգը՝ մեր միացումն ու մեր հավաքը: Գաղթեցին, այսգեղ ապրեցին՝ իրենց հետ



մշղապես էրգի կարուր ունենալով: Նրանց բերած ամեն երգի մեջ, ամեն պարի մեջ էն Էրգի աղջիկն ու դդան են, էն Էրգի պարիվը պահող Փիդային, էն մարեն, էն ծերունին: Ու Արուսյակի հայրիկն է երգում, ծափեր Սահակյանը: Երգածը մշեցիների այցելարդ «Գորանին» է: Աչք խու՞ի հիշեմ, թե հազար աչքով նայեմ «ըդ անփեր Մշու դաշտին».

Ըդ անփեր Մշու դաշտ հինգ հարիր գեղ էր,  
Էրկուս մեկ շապիկ, փողպարիկ նեղ էր...  
Ըդ անփեր աս գեղ լը խորովրկի գեղ էր...  
Մեղրագետի ջուր լը հիվնդին դեղ էր...

Երգը ուր առավ եկավ, որ Էրգի կարուր անթեղ մնա՝ որպես մեր լինելիության վկայություն, մեր ճանապարհի շարունակականություն: Հազար բերան օրինություն, որ այդափ երգ այդպես անաղարդ պահել գիրեին, հայրենակարուր կուփակումները բոլոր երգաշափ հոգու մաքրամաքուր ներկայությամբ ապրեցնել գիրեին, երգ-պարի անաղարդ ողեղենությունը գուրգուրանք-քնքանքով ու այրող անզգությամբ տարածել գիրեին: Ու աչքիս դեմ տարածություն չէ, ոգեղենի անսահմանություն է...

Մուշ գալուց առաջ, դարձյալ Վրուսյակի հորդորով, կարդացի Գարեգին Մրվանձպյանի «Նախերգանքը»՝ Մուշ աշխարհի մասին: Ես քիչ առաջ ինձ մեղավոր էի համարում, որ ես Մուշում եմ, Վրուսյակը՝ ոչ: Բայց Վրուսյակը իր զրուցակից մշեցիների ու Մրվանձպյանի հետք «վաղուց եղել է» Մուշում, Մուշը դեսել նրանց աչքերով: Եվ դրանից է, երևի, որ հաճախ ասում էր. «Բան է, թե երթամ Վրևմբահայասպան, երջանիկ կլինեմ, եթե հողը լայեղ անի, ինձ հետք խոսի: Անեզու կռունկի պես կզնամ, եփ կզամ: Թեափեք Երկիր գնալու բոլոր առիթներից խուսափել եմ: Պարճառ եմ ման եկել, բարձրածայն էլ ասել եմ, թե ես իմ պապոնց տանը զրոսաշրջիկ չեմ»:

Ես էլ Մուշը դեսել եմ Մրվանձպյանի ու Վրուսյակի հետք, դեսել եմ իբրև անթարգման զգացողություն:

Ուեմն դիմեմ Գարեգին Մրվանձպյանին, որ ես էլ, դու է՝ ընթերցող, առավել գունեղ դեսենք ու պարկերացնենք Մշու հրաշքը:

«... Մամիկոնյանք եկան այս աշխարհին մեջ և աշխարհի բնակիչներով քաջության անունը միշտ ժառանգեցին, քան թե զայն իրենց հետք բերին ու ասոնց վվին... Մշո հայերը պեփք եր քաջ լինեին՝ նայելով իրենց հայրենյաց դիրքին: Այն ամենի բարձրաբերձ լեռները մեծություն մը կ'ազդեին անոնց սրբին. անբառներով, մացառներով զարդարված սարերու զազաթներ և ծոցերը, նույնպես և շամբերը, որոց մեջ լեցուն զազաններ են, գիրենք կ'արդիալին զենքի վարժվիլ թե՛ որսալու համար և թե՛ պաշտպանվելու համար: Այս ընդարձակ դաշքը և այն մեծաբարած երկինքը վեհություն և վսեմություն կ'ազդեին անոնց հոգվույն, և այն պարվական կլիման արդեն գորավոր և հաղթանդամ կը կազմեր անոնց իրաները:»

Այս կարգի մարդիկ եղած են նաև այն ինքնազուխ պեյերը, որ կը փիրեին երեմն Մշո երկրին. և միևնույն կերպ քաջություն կը գործեն եղեր թե՛ իրենք և թե՛ իրենց ձեռքի տակ եղած հայերն ու քուրոերը:

Զուրերը բոլորն ալ գետեր են, որ չորս կողմի լեռներեն սուր ընթացքով և գոռուն-գոչուն ձայնով կը վազեն, կը թափին Եփրափին ծոցը. և թեափեք Մեղրագետին ու Եփրափ անձայն կ'ընթանան, քայց այնպես արագ և այնպես ահարկու և լայնածավալ պարույքներով ու հոսանքներով կ'անցնին, որ կարծես ահեղ թագավոր մի է Եփրափ և անոր սպարապետն է Մեղրագետը, որք ջրային զորաց բանակ մը առած՝ զավառները փիրելով կը վարեն, կը դիմեն ի կրիվ ուրիշ փիրապետաց հետք: Այսպիսի երկիր մը՝ որքան յուր բնակչաց նպաստավորիչ է, այնքան ալ յուր մերձավորաց և ծանոթից նախանձը կը գրգռե, և այս պարճառով գրեթե շարունակ կռվի մեջ ծնած ու մեծցած ըլլալով, մահվանե չվախցող մարդիկ էին մշեցիք...

Մշո աշխարհ լի է եղեր բանասպեղներով, երգասացներով, բազմաթիվ աշուղներու գեղ է եղեր այս երկիրը. և այս բնական հետքություն է այն քաջաց և քաջազրությանց, որոց

դյուցազնագործությունները կը դյուցաբանեին և անոնց թանկագին մահը պեսպես երգերով կնեղերերգեին:

Մշտ այն գեղեցիկ հորիզոնը աչք ձգողին սիրսը ինքնին կը թրթռա, արյունը կ'եռա և հոգին կը բարձրանա:

Բայց այսօր այս նշանները ազգային չեն. Մշտ քաջերը քրդերն են, և բոլոր երգեր ու խաղերն ալ քրդերեն լեզվով են: Մեր ըրած դիմուղությունն ընդհանրապես է. իհարկե մասնավորները պակաս չեն ու կը տեսնվին Մշտ ազգայնոց մեջ:

Կարող էին արդի հայերն ալ առաքինի ու նշանավոր մարդիկ հանդիսանալ, քանի որ երկիրը նույն դիրքն ունի և նույն ազդումը կ'ազդէ բնակչաց: Տայր' մանավանդ կ'ըսեմ, որոց չորս կողմը նախնաց գերեզմաններ են: Տեսնաս ծորի մը մեջ բույլ մի ծառ և աղբյուր մը. ավերակ մը հոն: Գերեզման մը այս բլուրի վրա: Խաջքար մը այն ինչ տեղ: Ամեն տեղերն ալ ուխսի կ'երթա Մշտ ժողովուրդ, առանց գիրնալու, թե ի՞նչ կա այնքետ: Բայց մրածողին խորիել կուրան, թե այն տեղերը կամ մեծ հիշափակ մ'է կափարփած, կամ մեծ նահափակ մ'է ինկած, կամ հրաշք մ'է տեսնված: Գեղեր և վայրեր, որոց կոչումն ու անունը մեկ մեկ պարմություն են նախնաց գործոց: Տաճարներու և բերդերու ավերակները, իին եկեղեցիները, որոց մեջ նախնաց անուն կամ հիշափակ կամ նշան մը կը տեսնվի, մանավանդ այն մեծաշեն և հոչակավոր վանորայք, որ նախնի մշեցի հայոց ասրբածապաշտության վկաներ ու վկայարաններ են: Այսքեղ հայրենաց պաշտպան մը է պառկեր: Հոն՝ կրոնից մեծ պաշտոնյա մը և մարդիրու մը: Թարգմանչաց շիրմներ Առաքելոց վանքն են: Մուշեղին և Վահանյանց դամբարանը Ս. Կարապետի մեջ: Հոս է Յրոնք, Տաղոնք, Օծ քաղաք, Վիշապ քաղաք, որոնք, Հացիկ, Մեղքի, Կվարս, Տոմ, Քարեխ որ և Բաղլու, Մուշեղնեն և այլն, որոց մեջեն փրկիչներ և լուսավորիչներ ելած են ազգիս: Ահ, ո՞ր ազգի հայրենիքը այսչափ անմահ և պանծալի հիշափակներ դեռ կենդանի ունի...»:

...Ընդհափեցին իմ խոհերը, երբ հեռվում գյուղ երևաց: Մեքենան դանդաղեցրեց ընթացքը: Ի՞նչ կարող են խոսել այդ պահին մեքենայի ուղևորները. «Վյդիտի հասփառ հայեր են ապրում», «Նայկական գյուղ է, բայց հիմա քրդերով է բնակեցված», «...թրքացած հայեր են ապրողները»: Այսպէս շարունակվեց տեսակետների բախումը, մինչև որ մեքենան կանգ առավ գյուղեզրին, ու անմիջապես էլ մի խումբ երեխաներ հավաքվեցին մեքենայի մով: Մենք պարբռասպ էինք նման հանդիպման՝ մեկը ծամոն, մյուսը՝ կոնֆեպներ, երրորդը մանր-մունք հուշանվերներ ծեռքերին հշան, ու ծանոթությունը կայացավ: Երեխաների հետի հեշտ էր, բայց երբ մեծահասակ կանայք ու փղամարդիկ եկան՝ քննող հայացքով նայում էին մեզ ու կարծես թե շիման եղանակներ էին որոնում: Մի տեսակ մենք էլ ձգվեցինք. մեր ուղեկիցը նախապես էր զգուշացրել, թե՝ աշխափեք շար շփումներ ջունենալ վեղաբնակների հետ:

Բայց նման առիթների դեպքում մոռացվում են անգամ շար խիստ զգուշացումները. մեր առջև գյուղ էր, ուր ժամանակին ապրել են մեր նախնիք, և այս մարդկանց հետ զրուցելը մի տեսակ հոգևոր պահանջ էր: Թարգմանիչը «գործի անցավ».

– Այս մարդկանց նախնիներն այս գյուղից են եղել,- հենց տեղում հորինեց նա,- եկել են իրենց պապենական փները տեսնելու:

«Որպետ հայ կա՝ բերեք սեղմեմ իմ սրբին,  
թե պանդուխս է՝ վիշքը մեղմեմ իմ սրբին...»:

Թարգմանչին խնդրեցի թարգմանել Տովհաննես Շիրազի փողերը: Հնարքն օգնեց: Զերմություն մրավ զրույցի մեջ, և Կարսից մեր խմբին «կցված» քուրդ ուղեկիցը, մոռացավ վերևից իրեն, իրենից մեզ պարփառիված զգուշացումը, խոհեմաքար մի փոքր հեռացավ մեզանից, երբ նկափեց, որ գյուղի կանանց մեջ կաշկանդվածություն կա: Միայն հայը, պապենական երկրի կարողն ապրողը կարող էր հասկանալ հուզմունքը, որ պարել էր ծագումով հայի ժառանգ, բռնի ազգափոխ այդ կանանց: Կարցականը կախվել էր մեր շուրթերին. «Գուցե նաև դավանանքը փոխած»: «Չե», - ասաց ամենապարեցը, որ որպետից որպետ կրահել էր հարցականը և վարանում էր արձագանքել: Եկող հայացքը շրջեց դեպի մեր

ուղեկիցը, և, համոզվելով, որ նա այլ կողմի վրա է նայում, խաչակնքեց: Մի քանիսը հեփսեցին նրան: Բացաբրություն ցունեցող մի խաղաղություն իջավ վերևից, խաչակնքող կինն է ասես թեթևություն զգաց: Ես, որ Ուխտի գալուց առաջ ինչ-որ չափով պարբասպել էի կանխափեալող նման հանդիպումների, հանեցի նոթափեփրու, թարգմանչին խնդրեցի օգնել ինձ:

– Թուրքիայում,- ասացի,- մոփավոր հաշվումներով ներկայումս ապրում է շուրջ 2 միլիոն քրդացած հայ: Քրդախոս հայերից շաբերը սրիպված մուսուլմանություն են ընդունել:

– Այո, սրիպված,- արձագանքեց տարեց կինը,- պայմաններն են այդպիսին:

– Միայն Մուշում,- շարունակեցի,- շուրջ 1000 հայ է ապրում: Տայերին ժամանակին շարդած քրդերի զավակները մեղա են զալիս ու ներողություն խնդրում իրենց պապերի գործած արարքների համար:

Թարգմանչի կարճ նախադասությունից հասկացա, որ իմ ասածների վերջին նախադասությունը չի թարգմանվել:

– Կարիք չկա,- հասկանալով տարակուսանքս՝ գլուխն ինձ թեքելով շշնչաց թարգմանիչը, - մեր հեռանալուց հետո այս կանանց անպայման հարցնելու են, թե ինչի մասին էիր խոսում:

Ես չպետք է քանզի դրանից որևէ բան չէր փոխվելու, և իմաստ էլ չուներ քրքրել այդ կանանց առանց այն էլ քրքրված հոգիները: Ու մենք շրապեցինք հրաժեշտ տալ՝ ով ինչ կարող էր թողնելով իբրև նվեր, իբրև հիշապակ:

Այդուհանդերձ, հրաժեշտից առաջ ես թարգմանչին խնդրեցի հանդարս, տող առ տող թարգմանել Շիրազի այն գրողերը, որ ասես այդ կանանց համար գրած լինի. «Իմ սուրբ արյունակիցներ, հոգեվիխ սեղմում եմ ձեզ սրբիս սրբին, համբուրում եմ ձեր հայկական՝ չաղարփված ոգիները և զիշերն ի բուն միաշխարհիս մեջ աղոթում եմ, որ միշտ ու հանապազ հայ մնաք՝ մինչև ողջ ազգի խմբվելը մեծ հայի՝ Մասիսի շուրջ»:

Ուշադիր լսող կանանց դեմքին նկարելի էր հուզմունքը, և մերթ ընդ մերթ ուղեկցողի կողմը հառած նրանց հայացքները զգուշացում էին նշանակում, նաև ափսոսանք, որ պիտի բաժանվենք: Ես զգիկն՝ զյուղի կանայք ինչ ապրում ունեցան, բայց եթե իրավես դավանանքը մնացել է անխաթար, ուրեմն մեր հեռանալու ափսոսանքն էլ անկեղծ ապրում էր:

...Ու նորից ճանապարհ: Մշո դաշբը՝ ընդարձակ, ճամփեն՝ երկար, ու դարձյալ Արույալի հետ ունեցած մեր գրույցներն են հետո:


Եվ ես հիմա ժամանակ ունեմ վերիիշելու Արույալի և նրա հայրիկի՝ Շափեր Սահակյանի հետ ունեցած իմ հանդիպումները:

## Նոթափեփր

Իմ նոթափեփրում Շափեր Սահակյանի մասին գրառումները մի առանձին տեղ են բռնում՝ նա Մշո աշխարհից իր ծնողների բերած հարյուրավոր երգեր ու պարեր՝ անապական մաքրության, ակունքներին հարազար, կարողացավ հնարավորինս գարածել նաև Շիրակի դաշիքում իր դեկավարած ինքնազործ խմբերով (եղեռնից փրկված ծնողները զաղթել էին Երազգավորս զյուղ), ապա և բազում ձայնագրություններով, որոնք ուղիղություն ունեն և այսօր էլ եթերում հնչում են: Շափեր Սահակյանը հայ երգ-պարի նվիրյալ էր, «Նարոյի» հոգևոր հայրը՝ իմացությամբ, փորձով, երգախենթ նկարագրով ու հրաշալի ձայնով:

Շիրակի դաշիքավայրում այնքան հաճախ ու այնքան բարի էին խոսում Շափեր Սահակյանի մասին, որ մի անգամ, դեռ խորհրդային գարիներին, Ախուրյանի շրջադրումի մշակույթի բաժնի վարիչ Արույալ Կարապետյանի հետ մի ծրագիր կազմեցինք՝ շրջանի մի քանի դպրոցներում դասղեկներին առաջարկեցինք աշակերպներին ազար թեմայով շարադրություն տալ «Շափեր Սահակյանը՝ ուսուցիչ և երգիչ»: Ի՞նչ գեղեցիկ, Ի՞նչ ակնածանքով գրված շարադրություններ էին: Դրանք ավելի շուրջ գողփրիկ մանրապատումներ

Էին Ախուրյանի շրջանում, ամբողջ Շիրակի գործում մեծ համբավ ունեցող մարդու և ուսուցչի մասին: Նրանց գրվածքներում ուսուցիչը, երգիչը, խմբավարը ներկայանում էր «հայոց լեզվի և գրականության ամենագեղագիտագործություններից», «մարդկային մաքուր ներաշխարհով օժիգած անհապ», «դպրոցական ծրագրից դուրս ազգային ավանդույթներ, սովորույթներ, հեքիաթներ, ասացվածքներ ուսուցանող, «հայ ժողովրդի բանահյուսությանը բազավորելոյակ ուսուցիչ»... Շարադրությունների հենքով Արփաշեսի հետ ռադիոհաղորդում պարբռասփեցինք (այդ գործիներին աշխապում էի Ռադիոյի երիտրասարդական բաժնում): Արձագանքը մեծ էր, ուրախալի. շաբերն էին լսել Շաբեր Սահակյանի անունը, և ռադիոհաղորդման ընթացքում հնչած մանրամասները նոր էշ էին ուսուցչի մասին: Ես այդ շարադրությունները մինչև իհմա էլ պահում եմ, և դրանք վերսպին կարդալու ցանկությունը հաճախ եմ ունենում:



*Շարունակելի*